

Սեմինար-պարապմունք «Արև» ընթերցասրահում

Նոյեմբերի 14-ին ին Հայաստանի ազգային գրադարանի Սպասարկաման բաժնի «Արև» ընթերցասրահում տեղի ունեցավ սեմինար-պարապմունք տեսողական խնդիրներ ունեցող ընթերցողների հետ: Ընթերցասրահի աշխատակից Կարինե Հովհաննիսյանը ներկայացրեց «Արև» համակարգի աշխատանքը, գործառույթները, նոր ստացված բրայլյան գրականությունը, խոսող գրքերն ու բյուլետենները:

«Արև» ընթերցասրահի գործառույթն է՝ կույր և տեսողական խնդիրներ ունեցողների սպասարկումը: Այն բացվել է 2008 թվականին ՎիվաՍել ՄՏՍ ընկերության տնօրեն Ռալֆ Յիրիկյանի հովանավորությամբ: «Արև» համակարգը մշակված է Երևանի մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտի կողմից: Համակարգը նախատեսված է տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար և նպատակ ունի ապահովելու հայերեն լեզվով նրանց հաղորդակցումը համակարգչի հետ: «Արև» ծրագիրը իր մեջ ունի գրաֆիկական և երաժշտական գրադարաններ, ընթերցասրահում ընթերցողներին սպասարկվում է նաև բրայլյան գրականություն:



